ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ /ԿՈՎԿԱՍՅԱՆ ԳՈՐԳԵՐ/

ՀՏԴ 904
DOI: 10.56246/18294480-2023.15-17

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՇԽՈՒՆՋ

Գավառի պետական համալսարանի դասախոս,

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ՀՀ մշակույթի նախարարության

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն»

ՊՈԱԿ-ի գործվածքի փորձագետ

էլփոստ՝ ashkhunjpoghosyan@gmail.com

Գորգը գեղարվեստական գործվածքի տեսակների մեջ առանձնանում է իր նշանակության ու գործածական դրսևորումների բազմազանությամբ: Բովանդակային ու տեխնոլոգիական ակնհայտ առանձնահատկություններով օժտված այդ մշակութային արժեքների հիմնական խորհուրդը դրանց գեղազարդման համակարգերն են, որոնք ներկայացնում են հնամենի ծիսապաշտամունքային պատկերացումների պատկերագրումներն ու խորհրդաբանությունը[1]: Մեր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրները հստակ հնարավորություն են տալիս հնամենի գորգի ծագումն ու օգտագործման ոլորտները կապել երկնային մարմինների ու բնության երևույթների պաշտամունքի հետ: Գորգադաշտը ընդունվել էր որպես սրբազանացված ու չարազերծ տարածք, և, որ հատկապես կարևոր է, այդպիսի ընկալման արձագանքները նկատելի են նաև մեր ժամանակներում: Ակնհայտ է, որ այդօրինակ գործոններով էր պայմանավորված ձեռագործ գորգի հանդեպ եղած առանձնակի հարգանքն ու հետաքրքրությունն արդեն բազում հազարամյակներ: Գորգը թանկարժեք առարկա է և այդ առումով էլ արդեն զարգացած միջնադարում էական տեղ է գրավել մշակութային արժեքների առևտրում և համարվել է վերնախավային նվիրատվության ցանկալի առարկա:

Այս հանգամանքների բերումով է նաև, որ արևելյան ու մասնավորապես առաջավորասիական էթնիկական հանրույթների միջավայրում գորգը դիտարկվում է որպես մշակութային առումով զարգացած լինելու հատկանիշ: Ուստի ակնհայտ է, որ գեղարվեստական ու տեխնիկա-տեխնոլոգիական բարձր չափանիշներ պահանջող և մշակութային արժեքների համաշխարհային շուկայում մշտամնա հեղինակություն վայելող այդ գործվածքների ստեղծումը տվյալ էթնոսի կողմից իրականում մեծ ներդրում է համաշխարհային մշակույթի գանձարան: Կարծում ենք, որ այս ամենով է պայմանավորված, որ գորգի ու գորգագործական մշակույթի

[1]. **V. Gantzhorn**, Le Tapis Chretien Oriental, Koln, 1991, **Ա Պողոսյան,** Գորգի ծիսապաշտամունքային նշանակության առթիվ .- ՊԲՀ, թիվ 1, 2000, էջ 175-184:

ծագումնաբանության, դրա կենտրոնների ու դրանց հետ առնչված էթնիկական հանրույթների խնդիրը, XIX դարի վերջից սկսած, դարձել է բուռն վիճաբանությունների առարկա:

Խնդրի հետագա զարգացումների արդյունքում ստեղծվել է չափազանց խառնաշփոթ վիճակ՝ գորգագործական մշակույթին այս կամ այն կերպ առնչություն ունեցող հանրույթներից յուրաքանչյուրը իրեն է վերագրում հնամենի գորգի ստեղծման ու դրա հետ կապված բոլոր գործընթացների պատմությունը: Այստեղ վիճաբանությունները հավերժական են այնքանով, որքանով որ յուրաքանչյուր հետազոտող իր տեսակետները համարում է անթերի ու հիմնավոր:

Հեռու լինելով այդ ամենը կարգավորելու մտքից՝ անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ, այնուամենայնիվ, կան որոշակի գործոններ, որոնք անկախ հետազոտողի ցանկությունից, շատ կարևոր են խնդրո առարկա հարցի բովանդակության մասին պատկերացում կազմելու և դրան համապատասխան տեսակետ ունենալու հարցում: Ըստ այդմ էլ մենք կարևորում ենք հետևյալ հարցադրումները՝

- ***սկզբնական գորգի իմաստն ու գործածման միջավայրը,***
- ***գորգագործական մշակույթի սկզբնական կենտրոններն ու դրանց ժողովրդագրական նկարագրի շարժընթացների ուսումնասիրությունը,***
- ***XIX դարի երկրորդ և XX դարի առաջին կեսերին գորգագործության վերելքի, դրա պատճառների և դրանում ընդգրկված հանրույթների պատմամշակութային առանձնահատկությունների բացահայտումը,***
- ***գորգերի տիպերի անվանումների հարցում տրամաբանված ու սկզբնաղբյուրներով հիմնավորված համակարգերի ստեղծումը:***

Նշված բոլոր առումներով էլ առաջավորասիական ձեռագործ գորգերի ծագման հետ կապված հարցերում, ինչպես վերն ասվեց, խառնաշփոթ իրավիճակ է:

Բանալի բառեր՝ *գորգ, Հարավային Կովկաս, սկզբնաղբյուր, տիպ, տիպաբանություն, ժողովրդագրություն, մանուֆակտուրա, տնայնագործ:*

Գորգ «Եռախորան» 1202 թ.

1. Սկզբնական գորգի իմաստն ու գործածման միջավայրը: Գորգագործական մշակույթի պատմության բացահայտման գործում, անշուշտ, կարևորը դրա ակունքների մասին պատկերացում ունենալն է: Խավավոր գործվածքի և ընդհանրապես գեղարվեստական գործվածքի՝ մինչ մեր ժամանակները ամբողջապես պահպանված նմուշը մ.թ.ա. V-մ.թ.ա. IV դարերով թվագրված «Պազիրիկ» գորգն է: Ինչպես այդ, այնպես էլ ավելի վաղ հազարամյակներին վերաբերող գործվածքի պատառիկները հիմնականում հայտնաբերվել են դամբարաններից: Այս հանգամանքը հատկանշական է ու ինքնին մատնանշում է գորգի ծիսական բնույթ ունեցած

լինելը: Իրականում այդպես էլ եղել է, և դրա վերապրուկներն էլ նկատելի են նաև մեր ժամանակներում[2]:

Այս առումով շատ կարևոր սկզբնաղբյուր է թուրք Էվլիա Չելեբիի ուղեգրությունը, որը 1647-1648 թվականներին իր հերթական ուղևորության ընթացքում, լինելով Էջմիածնում, ականատես է եղել մեռոնեփի ծեսին ու թողել է դրա նկարագրությունը: Դրանում ուշագրավն այն է, որ դրա համար անհրաժեշտ «կրակը վառում էին գորգի վրա»[3]: Իսկ գորգի մասին էլ պատմել են, որ դրա վրա ծնվել է Քրիստոսը: Այս լեգենդներն ակնհայտորեն ունեն նախաքրիստոնեական ակունքներ և առնչվում են մեռնող և հառնող բնության պաշտամունքի հետ: Ուղեգրի այս պատմությունը հնարավորություն է տալիս մեկնաբանելու հնամենի դամբարանների պեղումներից գորգի պատառիկներ հայտնաբերվելու պատճառներն ու նաև մեր մեր ժամանակներում էլ գոյատևող հանգուցյալին գորգի վրա դնելու սովորույթը[4]: Ակնհայտ է, որ հնամենի գորգն ու մասնավորապես չարախափան զարդանախշերով ծածկված եզրագոտիներով շրջանակված գորգադաշտը համարվել է այն սրբազան տարածքը, որտեղ կարող էր ստեղծվել անարատ և կենսատու խմիչքը՝ սրբազան մեռոնը: **Այդպիսի** մի կենսատու և անաղարտ տարածքում կարող է ծնվել մեռնող և հառնող բնությունը խորհրդանշող առասպելական կերպարը, և գորգի վրա Քրիստոսի ծնվելու մասին Էվլիա Չելեբու վերը հիշատակված լեգենդն էլ հենց այդ պատկերացումների վերապրուկային արձագանքն է[5]: Դրա արձագանքն է նաև 1232 թվականին ստեղծված հանրահայտ Թարգմանչաց ավետարանի «Աստվածամոր նինջը» մանրանկարում Աստվածամոր մահճի տակ դրված գորգը, որը նույնպես պետք է առնչվի **«սրբազան»** գորգի ու մասնավորապես **«գորգի սրբազնացված տարածք»** հասկացության հետ կապված հնամենի պատկերացումներին: Այդպիսի ընկալման թերևս ամենահամոզիչ վկայությունը հայոց գորգագործական մի շարք տարածաշրջաններում՝ Արցախում, Սյունիքում և այլուր գորգադաշտին ***տափ*** անվանելն է[6]: Այս բառը ***գետին***, ***հող*** բառերի հոմանիշն է, և այսքանով արդեն ենթադրվում է վաղնջական ժամանակներում հնամենի գորգի դաշտը կենսաբեր հողի խորհրդանիշ ընկալվելու հանգամանքը: Բայց դա դեռ բոլորը չէ: 1990-91 թվականներին Գողթան գավառի Փառակա գյուղից Վայքի Եղեգիս գյուղ տեղափոխված տոհմիկ գորգագործուհի Եղիզաբեթ Հարությունյանի պատմելով գորգադաշտը ***տափ*** կամ ***թախտ*** էին անվանում միայն դրա կարմիր գույնի լինելու դեպքում[7]: Այսպիսով, սկզբնական գորգը ընկալվում էր որպես սրբազնացված, անարատ ու արգասաբեր տարածք:

բ. Գորգագործության տնայնագործական ու մանուֆակտուրային եղանակների կապն ու առանձնահատկությունները: Գորգի ծիսապաշտամունքային բնույթն ինքնին ենթադրում է, որ դրանք գործել են տաճարական խոշոր համալիրներին կից գոյություն ունեցած հատուկ արհեստանոցներում: Առաջավորասիական պատմամշակութային տարածաշրջանների առումով դրանց մասին սկզբնաղբյուրներում եղած տեղեկությունները վերաբերում են Ք.ա. III-II հազարամյակներին: Ըստ երևույթին այդպիսիք եղել են նաև շատ ավելի վաղ

---

[2]. **Ա.Պողոսյան**, Գորգի ծիսապաշտամունքային նշանակության առթիվ, ՊԲՀ, թիվ 1, 2000, էջ 177-185, նույնի՝ Հայաստանում գորգագործության ծագման հարցի շուրջ, ՊԲՀ, թիվ 2, 2001, էջ 236-250, **Poghosyan Ashkhunj**, Carpets. - Armenian Folk Arts, Culture and Identity, Ed. by L.Abrahamian and N.Sweezy, Bloomington and Indianapolis, 2001, էջ 156- 162 /հետայսու՝ **A. Poghosyan**, Carpets/,

[3]. **Էվլիա Չելեբի**, Ուղեգրություններ, Թուրքական աղբյուրներ, Գ, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Ա.Խ. Սաֆրաստյանի, Եր., 1967, էջ 68- 69:

[4]. **Ստ.Լիսիցյան,** Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, թիվ 12, Եր., 1981, էջ 51, **Ա.Պողոսյան**, ԴԱՆ, տ. 2, էջ105:

[5]. **A.Poghosyan**, Carpets, էջ 162:

[6]. **Ա.Պողոսյան**, ԴԱՆ, տ. 2, էջ 105:

[7]. Անդ, տ. 2, էջ 64, 105:

դարաշրջաններում, օրինակ, Ք.ա. VIII-VII հազարամյակներում, երբ ծաղկում էին ապրում Հայկական լեռնաշխարհի մերձակայքում գտնված Չաթալ-Հոյուկի, Պորտասարի վաղ նոր քարեդարյան քաղաքակրթությունները: Համենայնդեպս զարգացման բավականաչափ բարձր մակարդակի մասին են վկայում Չաթալ-Հոյուկից հայտնաբերված գործվածքի նախշազարդ ու բազմերանգ պատառիկ-ները[8]: Դրա վկայություններն են նաև Ք.ա. XVII-XVI դարերով թվագրված Հառիճի դամբարանադաշտից հայտնաբերված կարպետատիպ, նախշազարդ ու բազմերանգ գործվածքն ու հատկապես «Պազիրիկ» գորգը: Ակնհայտ է, որ հետագա դարաշրջաններում, երբ գորգն արդեն նաև վերնախավային առարկա էր ու շրջանառվում էր նաև որպես առևտրի թանկարժեք ու հեղինակավոր առարկա, զգալիորեն ընդլայնվել էր արհեստանոցների ցանցը, ու այդպիսիք ունեին նաև իշխանական խոշոր տները, խոշոր առևտրականներն ու վանական համալիրները: Արհեստանոցային արտադրության մասին հայտնի է, որ պատմական Հայաստանում այն զարգացման առավելագույն մակարդակի էր հասել զարգացած միջնադարում: Դա այն շրջանն էր, երբ արաբական խալիֆաթի ողջ տարածքում հայկական գորգերը համարվում էին ամենաորակյալն ու գնահատվածը և գորգագործական այլ կենտրոնների արտադրանքից տարբերակվում էին հենց **«հայկական գորգ»** անվանումով: Ենթադրելի է, որ մեծաքանակ պատվերների կատարման համար ընդգրկվում էին նաև իշխանանահիստ բնակավայրերի մերձակայքում եղած գյուղերի տնայնագործները: Անշուշտ, այդ հանգամանքը նպաստում էր նաև գորգագործության ուսուցման, տնայնագործ գորգագործ վարպետների ձևա-վորման գործին: Այդ ճանապարհով էին ստեղծվում արհեստանոցային գորգերի տարբերակները, ու այդ ճանապարհով էր կենդանի մնում հնամենի գորգի հետ կապված ծիսամշակութային համալիրների ամբողջությունը:

Գորգագործական մշակույթի հետազոտման շարժառիթների մասին: Ինչպես ամենուր, պատմական Հայաստանում էլ տնտեսության ու մշակույթի վերելքը կամ անկումը անմիջականորեն կապված էր երկրի աշխարհաքաղաքական վիճակի հետ: Բագրատունիների թագավորության ու խոշոր նախարարական տների անկումից հետո պատմական Հայաստանում գորգագործական մշակույթի նկարագրում տեղի են ունենում չափազանց նշանակալից դրսևորումներ: Հայոց պետականության անկումից հետո անկում են ապրում նաև արհեստանոցային արտադրության կենտրոնները՝ դրանք մասնակիորեն պահպանվում են պատմական Հայաստանի այն տարածաշրջաններում, որոնցում շարունակում էին գոյատևել իշխանական տների շառավիղները: Այդպիսիք նկատելի էին հատկապես Արցախում, Սյունիքում, Վասպուրականի մի շարք գավառներում, մասնավորապես արևելյան ու հյուսիս արևելյան գորգագործական կենտրոններում և այլն: Շարունակում էին նաև գոյություն ունենալ վանական խոշոր համալիրներին կից եղած արհեստանոցները: Արհեստներով, հատկապես գործվածքին առնչվողներով զբաղվում էին նաև կուսանոց-անապատներում[9]:

Այս իրավիճակի հիմնական հետևանքն այն էր, որ Հայաստանում արտադրվող գորգերը դադարում են **«հայկական գորգ»** անվանումով տարբերակվելուց, դրանք տարբերակվում են պատմական Հայաստանում տեղավորված տարատեսակ քոչվոր ցեղերի, առևտրական մայրուղիներին գտնվող խոշոր բնակավայրերի անվանումներով: Դեռևս զարգացած միջնադարում եվրոպական երկրներում լայն հետաքրքրություն էր ձևավորվել արևելյան գորգերի նկատմամբ. այն վերնախավի շրջանում դարձել էր պերճանքի առարկա:

[8].https://ru.wikipedia.org/wiki/%D0%A7%D0%B0%D1%82%D0%B0%D0%BB-%D0%A5%D1%8E%D1%8E%D0%BA#/media/%D0%A4%D0%B0%D0%B9%D0%BB:Museum_of_Anatolian_Civilizations016.jpg

[9]. Օրինակ՝ հյուսիսային Արցախի Չարեքա անապատում են գործել Երուսաղեմի սուրբ Հակոբ վանքի թանգարանում պահվող հայատառ ընդարձակ հիշատակարան ունեցող, 1731 թվականին գործված գորգը:

Առաջավորասիական գորգագործական կենտրոններում էլ Եվրոպա առաքվող գորգերի հավաքագրմամբ զբաղվում էին ոչ միայն գորգի առևտրականները, այլ նաև կաթոլիկ եկեղեցու միսիոներ-քարոզիչները: Այդ ամենի պահանջարկի բավարարման համար, կարծում ենք, կարևոր դերակատարում ունեին նաև տնայնագործ գորգագործները, որոնք հիմնականում կատարում էին հենց վերն ասվածների պատվերները:

Հատկանշական է, որ արևելյան գորգի ծագման ու տիպաբանման հարցերը հետաքրքրության առարկա դարձան ոչ թե դրանց ստեղծման երկրներում, այլ Արևմտյան Եվրոպայում: Եվրոպայում այն թանգարանային արժեք և գիտական ուսումնասիրությունների առարկա է XIX դարի կեսերից սկսած, և հենց այդ ժամանակներից ի վեր է, որ գիտական շրջանառության մեջ են առևտրականների կողմից արևելյան գորգերին ու կարպետներին տրված առևտրով հայտնի քաղաքներ ու տարածաշրջաններ մատնանշող ապրանքային անվանումներ: Անշուշտ, կարևորված էին նաև տեխնոլոգիական ու տիպաբանական հարցերը, սակայն բոլոր դեպքերում էլ, որպես հիմնական չափանիշներ, XIX դարի կեսերից շրջանառվում են առևտրականների շրջանում ավանդաբար ընդունված գորգագործական կենտրոնների և գորգերի տիպերի անվանումներն ու ընդհանուր պատկերացումները: Մանուֆակտուրային գորգագործության հարցում էլ կարևորված էին Սպահանի և Կում-Կափուի մանուֆակտուրաները, որոնք Օսմանյան Թուրքիայում և Սեֆյան Պարսկաստանում ծաղկում էին ապրում հատկապես XVII-XVIII դարերում: Ուսումնասիրողներն էլ, որոնք հիմնականում արևելագետներ էին, պատկերացում չունենալով գորգագործական տարածաշրջաններում ապրող ժողովուրդների վերը նշված գործոնների մասին, այդ անվանումներով էլ ներկայացնում են արևելյան և մասնավորապես կովկասյան գորգերը: XIX դարի վերջերին և XX դարի առաջին կեսում, բացի գորգերի ապրանքային անվանումներից, արտերկրի ուսումնասիրողները գիտական շրջանառության մեջ են դրել նաև «**քոչվորական գորգ**», «**մուսուլմանական գորգ**» և «**սելջուկյան գորգ**» հասկացություններն ու այդպիսով փորձել անդրադառնալ նաև այդ մշակույթի ծագումնաբանական հարցերին[10]: Հետագա մի քանի տասնամյակի ընթացքում այդ նույն ճանապարհով ստեղծվեց **սելջուկյան մշակույթի** առասպելը, որում ներառված են ճարտարապետությունը, կիրառական արվեստի կարևոր ոլորտներն ու նաև գորգարվեստը: Դա միանգամայն համահունչ էր «**քոչ-վորական գորգ**» և «**մուսուլմանական գորգ**» հասկացություններին, և ի սկզբանե էլ նպատակաուղղված էին հարավ - արևմտյան Ասիայի մշակութային համակարգի ձևավորման ասպարեզում իսլամական և մասնավորապես թուրք-սելջուկյան մշակույթի դերի ու նշանակության ուռճացմանը ինչպես գորգարվեստի բնագավառում, այնպես էլ առհասարակ:

Մեր կարծիքով՝ այս ամենի հետևանքով էլ արևելյան գորգերի ծագումնաբանության հետ կապված հարցերում գոյություն ունի ներկայիս խառնաշփոթը:

Հանուն արդարության պետք է շեշտենք, որ հետագայում արտերկրի ուսումնասիրողների մի մասի համար ակնհայտ դարձավ այդ անվանումների չհիմնավորված լինելը, սակայն, այդուհանդերձ, դրանք առ այսօր էլ գիտական շրջանակներում ունեն գերիշխող դիրք:

Փաստորեն այդ տեսության հետևորդները, զարգացնելով պանթուրքիզմի գաղափարախոսությունը, սելջուկ- թուրքմենական և մոնղոլական քոչվոր ցեղերի՝ Հայկական լեռնաշխարհի ներթափանցումը ներկայացնում են իբրև պատմական

[10].**Wilhelm Bode,** Vorderasiatische knupteppiche aus alterer zeit, Verlag von Hermann Seemann Nachfolger, Leipzig, 1901, **K.Erdman**, Die Geschichte der fruher Turkische tepiche, London, 1977, էջ 14, **Heinrich Jacobi,** How to Know Oriental Carpets and Rugs,London, 1974, **M.Ghazarian**, Armenian Carpet, էջ 8-14, **Valter B Denny,** How to Read Islamic Carpets, the Metropolitan Museum of Art, New York, 2014:

Հայաստանում և Փոքր Ասիայում տնտեսության ու մշակույթի զարգացման, իսկ որոշ արհեստագործությունների, մասնավորապես գորգագործության համար նաև սկզբնավորման գործոն:

Միջազգային հանրույթի կողմից էլ կային այդպիսի պատկերացումների ընկալմանը նպաստող գործոններ, մասնավորապես գիտնականների ու առևտրականների միջավայրում արմատացած գորգերի տիպերի անվանումներ ու դրանց ծագումնաբանությունը մատնանշող հասկացություններ:

1920-30-ական թվականներին Թուրքիայի թանգարաններում ստեղծվեցին գորգերի խոշոր հավաքածուներ, գիտահետազոտական կենտրոններ, համալսարանական ամբիոններ, և հայտնվեց նաև վերն ասված նպատակների իրականացմանը նպատակաուղղված գիտնականների մի մեծ խումբ (Օ. Ասլանապա, Շ. Եդկին, Բ. Բալփինար, Ն. Դիարբեքիրլի, Վ. Դուրուսել և այլն): Դրանց ջանքերով էլ անընդհատ փորձ է արվում ժխտել հայերի կողմից գորգագործությամբ ավանդարաբար զբաղվելու և այդ ասպարեզում որևէ մի նշանակություն ունենալու փաստը:

Այդ ասպարեզում, 1960-ական թվականներից սկսած, աննախադեպ ակտիվ գործունեություն է ծավալված Ադրբեջանում: Ադրբեջանցի ուսումնասիրող, ոչ անհայտ Լյաթիֆ Քերիմովը այսպես կոչված «ադրբեջանական գորգերին» նվիրված իր երեք հատորներում Կովկասում հայտնի բոլոր տեսակի գորգերին հարմարեցրել է որոշակի թուրքական տեղանուններ և դրանք ներկայացրել իբրև ադրբեջանցիների մշակութային ժառանգություն: Նա հերքում էր հայերի կողմից գորգագործությամբ զբաղվելու հնարավորությունն ու նաև առհասարակ **«հայկական գորգ»** հասկացությունը, և այդ զբաղմունքը ներկայումս էլ շարունակում են նրա բազմաթիվ հետևորդները:

Այսպիսով, գորգը՝ իբրև պատմամշակութային բացառիկ կարևորություն ներկայացնող առարկա, վաղուց ի վեր շահագրգիռ երկրներում պետական հատուկ ուշադրության ոլորտում է, որի արդյունքում էլ հայոց մշակութային ժառանգության այդ ինքնատիպ մասը շատերի կողմից ճանաչված է որպես թուրքական ցեղերի մշակույթ: Ըստ էության խնդիրը հիմնականում վերաբերում է հայոց պատմամշակութային ժառանգության կարևոր բաղադրամասերից մեկին, որի ձևավորման խոշորագույն կենտրոնները եղել են Կովկասը, պատմական Հայաստանի արևմտյան նահանգները, Փոքր Ասիայի կենտրոնական տարածաշրջաններն ու մասնավորապես Փոքր Հայքը:

Գորգ Խաչազարդով, 1592թ.

Այդուհանդերձ, խնդիրն այստեղ միայն հայոց պատմամշակութային ժառանգության՝ այլոց կողմից յուրացվելը չի: Մենք հասկանում ենք, որ տարածաշրջանում տարբեր դարաշրջաններում գոյություն են ունեցել գորգագործական մշակույթով զբաղվող այլ էթնիկական հանրույթներ ևս: Սակայն շատ կարևոր է, որ ցանկացած պատմամշակութային ժառանգության ծագումնաբանական հարցերի ուսումնասիրման դեպքում հաշվի առնվեն վերը մեր առաջադրած գործոնները: Դրանք ուսումնասիրողից պահանջվում են պատմական, պատմաշխարհագրական, պատմական ժողովրդագրության, ազգագրության, հնագիտության, բանահյուսության, աղբյուրագիտության, արվեստագիտության հետ կապված լուրջ պատկերացումներ: Միայն այդ դեպքում է, որ կարող են ստեղծվել մշակութային այս կամ այն ոլորտի ծագումնաբանության և այս կամ այն

էթնիկական հանրույթի կողմից դրան առնչություն ունենալ չունենալը բացահայտող տեսություններ: Ասել է թե գործ ունենք գորգագիտության հետ, որն իր բովանդակությամբ և իրեն վերաբերող հիմնախնդիրների լուծման գործում անհրաժեշտաբար կապված է վերը ներկայացված գիտություններին ու դրանց հետ միասին կազմում է մեկ ամբողջություն: Այս տեսակետից դիտարկելով էլ՝ գալիս ենք այն համոզման, որ գորգագործական մշակույթին վերաբերող տեսություններից և ոչ մեկը չի համապատասխանում այս պայմաններին, ուստի և իրենց մեծամասնությամբ մեր համար չեն կարող ընդունելի լինեն:

Գորգագործական մշակույթի հետազոտման հետ կապված խնդիրների մասին:

Գորգ «Գուհար», 1680

Առաջավորասիական գորգագործական կենտրոնների թվում ուսումնասիրողներն ավանդաբար կարևորում են Կովկասն հարավային ու Փոքր Ասիան:

Հայոց գորգագործական մշակույթի հետազոտման առումով խնդրահարույց են հենց հարավ- արևելյան Կովկասն ու Փոքր Ասիան, որոնք ավանդաբար եղել են ինչպես գորգի առևտրականների, այնպես էլ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Դրանք այն տարածաշրջաններից են, որոնց ժողովրդագրական նկարագիրը վաղ շրջանից արդեն իսկ բազմաշերտ ու խայտաբղետ էր, իսկ վերջին հազարամյակի ընթացքում էլ աշխարհաքաղաքական բազմաբնույթ ու լայնածավալ իրադարձությունների հետևանքով լրացվել էր տարատեսակ եկվոր տարրերով: Ակնհայտ է, որ այդ տարածաշրջաններում գորգագործական մշակույթի վաղ ավանդույթների առկայությունն էլ այս կամ այն չափով պետք է վերաբերի բնիկ հանրույթների մշակութային համակարգերին:

Դեռևս վաղ միջնադարին վերաբերող պատմահնագիտական ու պատմազգագրական սկզբնաղբյուրների համաձայն՝ հարավային Կովկասի բնիկ էթնիկական հանրույթների մի մասը, մասնավորապես հայերը այս կամ այն չափով հայտնի էին գորգագործական մշակույթի ավանդույթներով[11]: Արցախյան գորգագործական մշակույթի ավանդույթների շարունակման ու զարգացման վերաբերյալ կարևոր փաստարկ ենք համարում X դարում Պարտավում «**կիրակի**» կոչված շուկայի գոյության մասին տեղեկությունը[12]: Մատենագրի՝ Աբու-լ Կասիմ Իբն Հաուքալի այդ հաղորդումը, ըստ որի այդտեղ վաճառահանվում էին նաև մերձակա գյուղերից բերված գորգեր ու այլ գործվածքեղեն, լրացնում է Աղվանից պատմության հեղինակներին, հաստատում մեր ենթադրությունը դրա տեղական ծագում ունենալու ու տարածված լինելու մասին և նաև հնարավորություն տալիս

[11]. Տես՝ **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ., առաջաբանը և ծանոթագր.՝ Վարագ Առաքելյանի, Եր., 1969, էջ 175, **Poghosyan Ashkhunj**, **Rug weaving Culture of Artsakh,** Historico-Ethnographic illustrated study, «Scholars' Press», Saarbrücken, Germany, 2015, էջ 9: Ի դեպ, ձգտելով գորգագործական մշակույթից հնարավորինս զերծ պահել հայերին ու Հայաստանը, Լ.Քերիմովը հիշատակելով Կաղանկատվացու այս տեղեկությունը, չի նշել Արցախ տեղանունը և այն ներկայացրել է 'Ադրբեջանի հյուսիսային մասերում պատրաստում էին մետաքսե գործվածք և գույնզգույն գորգեր' տեսքով, տես՝ **Л. Керимов**, Азербайджанский ковер, h. 2, էջ 12-13:

[12]**. Абу-л Каим ибн-Хаукаль,** Книга путей и царства, Перевод и комментарии **Н. А. Караулова**, СМОМПК, вып. 38, Тифлис, 1908 , էջ 14-15:

եզրակացնելու, որ գորգագործությունը տարածաշրջանում, ըստ էության, ուներ նաև ապրանքային ուղղվածություն: Բնական է, որ տևական շփումների արդյունքում գորգագործական որոշակի ավանդույթներ ձեռք բերեցին նաև տարածաշրջանում XVI-XVII դարերից դեգերել սկսած թուրքմենական ծագումով քոչվոր ցեղերի մի մասը, համենայնդեպս ավշարներին, շահսևաններին, կարափափախներին վերագրվող գորգերի ու մանավանդ կարպետների մասին կան նաև XIX դարին վերաբերող ազգագրական տեղեկություններ[13]: Այսինքն՝ հարավային Կովկասի գորգագործական մշակույթի ձևավորման ու հետագա զարգացումներում այս կամ այն հանրույթի ունեցած ներդրումների չափը բացահայտելու հարցում առանցքային նշանակություն ունեն հնագիտական ու պատկերային աղբյուրների և պատմական ժողովրդագրության ընձեռած հնարավորությունների պատմահամեմատական հետազոտությունների արդյունքները: Այդպիսի հետազոտությունների հիման վրա է, որ հնարավոր է դառնում հստակորեն պատկերացում կազմել այս կամ այն էթնիկական հանրույթի մեջ արմատավորված գորգագործական ավանդույթների ու նաև տվյալ միջավայրում ստեղծված գորգերի տիպերի ու դրանց գեղարվեստական ու տեխնոլոգիական առանձնահատկությունների մասին: Սակայն հարկ է շեշտել, որ հրապարակված ուսումնասիրությունների մեծ մասում բացակայում են պատմահամեմատական հետազոտություններն ու լայն տեղ է տրված կամայական ձևակերպումներին: Այսպիսի պայմաններում գորգերի տիպերի ծագումնաբանական կամ էթնիկական պատկանելիության մասին եղած տեսակետները վստահություն չեն ներշնչում և չեն կարող մեր համար ընդունելի լինել: Ընդհանրապես մասնագիտական շրջանակներում տեղ գտած վերը նշված հանրույթների պատմամշակութային ժառանգության մասին եղած պատկերացումները կամ բացակայում են, կամ էլ չափազանց թերի են:

Կովկասյան գորգերի տիպաբանման խնդիրները: Այս իրավիճակի հիմնական պատճառներից մեկն էլ գորգերի տիպերի՝ գոյություն ունեցող անվանումներն են, որոնք մեծ մասամբ արևելյան գորգերի առևտրով հայտնի քաղաքների ու տարածաշրջանների անվանումներ են, որոնցով առևտրականները տարբերակում էին իրենց կողմից ձեռք բերված գորգերը: Ընդհանուր առմամբ դրանք պատկերացում չեն տալիս այս կամ այն տիպի գորգերի ծագման, տարածման և մանավանդ դրանց ստեղծող էթնիկական հանրույթների մասին, սակայն միաժամանակ հնարավորու-թյուն են տալիս այդ տարածքներում հայտնված ցեղերին ներկայանալ որպես դրանց ստեղծողներ:

Ընդհանուր առմամբ գորգերի տիպերի ու խմբերի տարբերակման ապարեզում առկա են հետևյալ սկզբունքները.

ա.Աշխարհագրական անվանումներ: Այդպիսիք են «**Շիրվան**», «**Ղազախ**», «**Ղուբա**», «**Ղարաբաղ**», «**Դերբենտ**», «**Ղարադաղ**» և նմանատիպ տասնյակ այլ աշխարհագրական բնույթի անվանումներով տարբերակվածները[14]: Այդ անվանումներով փաստորեն ներկայացվում են գորգերի տասնյակ տիպեր, որոնք ընդհանրապես հայտնի էին այդ, և այլ տարածաշրջաններում:

բ.Դավանանք ու կացութաձև մատնանշող անվանումներ: Այդպիսիք են, օրինակ, «**քոչվորական գորգ**» և «**մուսուլմանական գորգ**» հասկացությունները, որոնք գիտական շրջանառության մեջ են մտել 1880-ական թվականներից: Ընդ որում եթե «մուսուլմանական գորգեր» հասկացությունը շրջանառության մեջ է XIX դարի երկրորդ կեսից, ապա «**քրիստոնեական գորգ**» հասկացության

[13]. **Ռաֆֆի**, ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս, 'Երկերի ժողովածու', հ. 9, 170-230,Եր., 1987, էջ 175-176:

[14]. Տե՛ս, օրինակ, **A. F. Kendrick** and **C. E. C. Tattersall**, Hand-Woven Carpets Oriental and European, Dower Publikcations, INC, New York, 1973, էջ 161-172: Դաղստան, Շիրվան, Ղազախ, Դերբենտ, Ղարաբաղ, 115, 129, 132, 133, 142, 148, Կովկասյան գորգերի մասին՝ էջ 58-60, /115-146 պատկերները կովկասյան գորգերն են/, **Heinrich Jacobi,** նկ. 6, 7, 21:

արմատավորման հարցում կարևոր դեր խաղաց 1991 թվականին հրատարակված **Ֆ.Գանցհորնի** հիմնարար աշխատությունը[15]: Ըստ իս՝ նման մոտեցումները հնարավորություն չեն ընձեռում գորգերի որոշակի խմբերի կամ տիպերի տարբերակման համար: Բանն այն է, որ նմանատիպ անվանումներով տարբերակված գորգերը մեծ մասամբ ունենում են գեղազարդման միևնույն սկզբունքներն ու հորինվածքները, այսինքն՝ նույն տիպին պատկանող գորգերը կարող են վերագրվել վերը նշված կենսաձևն ու դավանանքը ու առաջին հերթին նաև գորգագործական ավանդույթներ ունեցող էթնիկական հանրույթներից ցանկացածին: Համենայնդեպս հանրահայտ է, որ Կովկասի ու մերձակա գորգագործական կենտրոնների ու գորգագործական մշակույթի հետ առնչված քրիստոնյա և իսլամ դավանող հանրույթներին վերաբերող մի քանի տասնյակ տիպի գորգեր ունեն տեխնոլոգիական ու գեղազարդման միևնույն հատկանիշները: Հատուկ ուզում ենք շեշտել, որ մենք էական չենք համարում դրանց գեղազարդման մանրամասներում տեղ գտած խաչազարդերի առկայությունը:

գ. Ցեղային անվանումներ: Գորգագետների ու առևտրականների շրջանում ընդունված է նաև այս կամ այն հանրույթի կամ ցեղախմբի անունով գորգերի տարբերակման ավանդույթը: Մասնավորապես դրանց թվում են «**սելջուկյան**», «**օսմանական**», «**թուրքական**», «**Թարաքյամա», «Շահսևան», «Թեքի», «Էրսարի**» և նմանատիպ այլ անվանումներով տարբերակումները[16]: Այստեղ իրավիճակը փոքր ինչ այլ է: Թուրքմենական ցեղերից յուրաքանչյուրին բնորոշ գորգագործական ավանդույթները հստակորեն տարբերակված են ի սկզբանե, և դրանցից յուրաքանչյուրի գեղազարդման սկզբունքներն ըստ էության դարեր շարունակ մնացել են անփոփոխ: Ինչ վերաբերում է «**սելջուկյան**», «**օսմանական**», «**թուրքական**» ու նմանատիպ այլ եզրույթներին, իրականում դրանք մտացածին հասկացություններ են ու ի սկզբանե նպատակաուղղված էին որոշակի քաղաքական հիմնախնդիրների լուծմանը:

Կովկասյան և հյուսիս-արևմտյան Իրանի գորգագործական կենտրոններում ստեղծված գորգերի տարբերակման համար շրջանառվում են **«ավշար», «բախտիար», «շահսևան», «կարաջա», «բորչալու»** ու մի շարք այլ ցեղերի անվանումներ, պատմական Հայաստանի հարավային նահանգների գորգագործական կենտրոններում ստեղծված գորգերի տարբերակման համար էլ հիմնականում շրջանառվում է «քրդական գորգ» ընդհանրացված անվանումը:

Կովկասյան գորգերի հարցում չափազանց մեծ խառնաշփոթության աղբյուր է «**ադրբեջանական գորգ**» հասկացությունը: Ըստ այդմ էլ հայտարարվում է, որ ադրբեջանցիներն էլ մեծ դեր են ունեցել գորգարվեստի ստեղծման ու դրա տարածման ասպարեզում, և որ կովկասյան գորգերի 95%-ը ադրբեջանական է[17]: Ուստի պատահական չէ, որ ներկայումս էլ կովկասյան գորգերի զգալի մասը մասնագիտական շրջաններում հիմնականում համարվում է այսպես կոչված **ադրբեջանական**:

Անշուշտ, համապատասխան սկզբնաղբյուրներով հաստատված լինելու դեպքում միանգամայն ընդունելի է այս կամ այն էթնիկական հանրույթի անվանումով գորգերի որոշակի խմբի կամ խմբերի տարբերակումը: Այս առումով մասնագետների շրջանում որևէ տարակուսանքի տեղիք չեն տալիս «**չինական**», «**պարսկական**», «**թուրքմենական**» ու նմանատիպ մի շարք այլ հասկացություններ այնքանով, որքանով որ խոսքը վերաբերում է գորգագործական մշակույթի ավան-

---

[15]. **Gantzhorn V.**, Le Tapis Chretien Oriental, Koln,1991.

[16]**.Wilhelm Bode,** նշվ.աշխ., **K. rdman**, նշվ.աշ., էջ 14, **M**. **Ghazarian**, Armenian Carpet, էջ 8-14: **S**. **Yetkin**, Early Caucasian Carpets in Turkey, Volume 1, 2, London, 1978, **Heinrich Jacoby,** նշվ. աշխ., էջ 118,123,77,110 և այլն:

[17]. Տե՛ս **Л. Керимов**, Азербайджанский ковер, т.1, Б., 1961, էջ 18 , նույնը Азербайджанский ковер, Б., 1985, էջ 9 և այլն:

դույթներով հայտնի էթնիկական հանրույթներին, ու որոնցից յուրաքանչյուրին բնորոշ էին գեղազարդման ու տեխնոլոգիական որոշակի հատկանիշներ: Մասնավորապես թուրքմենական գորգերի դեպքում դրանք ցեղական ավանդական վարդակների, իսկ պարսկականի դեպքում էլ բուսաածաղկային, եղեմական ու ընդհանրապես թեմատիկ-պատկերային տեսարանների առկայությունն է:

դ. Մենք ընդունելի ենք համարում նաև գորգերի աշխարհագրական ընդհանրացված անվանումներով տարբերակումն ու մասնավորապես «**կովկասյան գորգ**», «**փոքրասիական գորգ**», «**տրանսիլվանիան**» ու նմանատիպ այլ հասկացությունները՝ այս դեպքում նկատի ունենալով ընդհանրապես այդ տարածաշրջաններում գործված գորգերը: Ընդ որում հարկ ենք համարում շեշտել, որ այս դեպքերում խոսքը չի գնում առ այն, որ այդ անվանումներով տարբերակված գորգերը պարտադիր ունեն տեղական ակունքներ:

Անվանումների պայմանական լինելը հաշվի առնելով հանդերձ՝ դրանցում չեն կարող բացառվել այս կամ այն չափի թերությունները: Սակայն բոլոր դեպքերում էլ ակնհայտ է, որ շրջանառության մեջ եղածների գերակշիռ մասը զուրկ է տեսական ու փաստագրական հիմնավորումներից:

Ստեղծված իրավիճակի պատճառների թվում մենք կարևորում ենք այն, որ արևելյան գորգի հանդեպ գիտական հետաքրքրությունների սկզբնավորումը սկսվեց միայն XIX դարի երկրորդ կեսից: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում կտրուկ աճում է ձեռագործ արևելյան գորգերի պահանջարկը: Դրանով էլ պայմանավորված՝ սկսում է ապրանքային գորգագործության բուռն վերելքը գորգագործական մշակույթի ավանդույթներով հայտնի առաջավորասիական գորգագործական մի շարք կենտրոններում, մասնավորապես հյուսիս արևմտյան Իրանում, Փոքր Ասիայում և հարավային Կովկասում: Այդ դարավերջին նշված տարածաշրջաններում արդեն գործում էին գորգագործական մի քանի տասնյակ խոշոր ձեռնարկություններ, և մի քանի տասնյակ հազար տնայնագործ գորգագործներ կատարում էին այդ ձեռնարկությունների պատվերները: Գորգագործները գորգերը գործում էին գորգանկարիչների ստեղծած տեխնիկական նկարների հիման վրա, իսկ ձեռնարկություններն էլ ստեղծվում էին գորգագործական ավանդույթներով հայտնի ու նաև էժան աշխատուժով հարուստ տարածքներում: Ընդ որում էժան աշխատուժ էին հատկապես հարավային Կովկասում արդեն հաստատված մահմեդական կիսաքոչվոր ցեղերի կանայք ու աղջիկները: Այս տեսակետից հատկանշական տեղեկություն է ներկայացնում Յ. Զեդգենիձեն՝ Շուշիի քաղաքային դպրոցի ուսուցիչներից մեկը: Ըստ այդմ պարզվում է, որ այդտեղ հայերից քչերն էին զբաղվել գորգագործությամբ, մինչդեռ ադրբեջանցիների ընտանիքներում այն համատարած էր: Զեդգենիձեն այս երևույթը բացատրել է նրանով, որ ***թաթարական ընտանիքներում տղամարդիկ տնտեսական գործերով զբաղվելու սովորույթ չունեին: Այդ պատճառով էլ կանայք ստիպված զանգվածաբար զբաղվում էին գորգագործությամբ և դրանից առաջացած եկամտով էին հոգում էին ընտանիքի կարիքները***[18]**:** Ասել է թե՝ այս դեպքում գորգագործությամբ զբաղվելը կապվում էր այդ էթնիկական հանրույթի կենցաղավարման առանձնահատկությունների հետ: XIX դարի վերջերին ու XX դարի սկզբներին այսպիսինն էր իրավիճակը նաև հարավային Կովկասի մյուս՝ ապրանքային գորգագործությամբ հայտնի կենտրոններում:

Ինչպես տեսնում ենք, կովկասյան ու մասնավորապես հարավ արևելյան Կովկասին վերաբերող գորգերը այս կամ այն հանրույթին վերագրելը դյուրին գործ չէ, եթե իհարկե խոսքը գնում է գիտական լուրջ հետազոտությունների մասին:

Այդ առումով էլ մենք կարևորում ենք հետևյալ հիմնահարցերը.

[18]. **Я. Зедгенидзе,** Город Шуша. Производство ковров и паласов.- СМОМПК вып. XI, Тифлис,1891էջ 3- 2, 32:

ա. գորգի ի սկզբանե ծիսապաշտամունքային, հետագայում էլ նաև վերնախավային առարկա լինելու հանգամանքը,

բ. գորգի արտադրության կենտրոնացված լինելը աշխարհիկ վերնախավին ու վանական խոշոր համալիրներին կից եղած գորգագործական արհեստանոցներում,

գ.արհեստանոցային գորգագործության հետ միասին տնայնագործական գորգագործության գոյության փաստը:

Հայոց պետականության անկումից հետո, ըստ իս, առաջին հերթին շարունակվել էին գորգագործության կենտրոններ հանդիսանալ իշխանանիստ բնակավայրերը, որոնք նախկինում էլ հայտնի էին դրանով, ու որոնցում այս կամ այն չափով շարունակում էին գոյատևել հայոց իշխանական տները: Հայտնի են Կիրակոս Գանձակեցու տեղեկությունները Արցախի իշխանների կանանց ու աղջիկների ոստայնանկությամբ զբաղվելու մասին: Ընդ որում, ըստ Եր. Լալայանի հավաքած ազգագրական տեղեկությունների, նույնիսկ XIX դարի երկրորդ կեսին էլ մելիքական տների կանայք և աղջիկները զբաղվում էին ասեղնագործությամբ, «քսակ և այլ ձեռագործներ էին շինում»[19]: Առանձնահատուկ մշակութային կենտրոններ էին վանական խոշոր համալիրները, որոնք որպես այդպիսին մնացել են իրենց գոյության ողջ ընթացքում: Ընդ որում այս դեպքում առկա են նման հաստատություններում ստեղծված մշակութային արժեքներ, որոնց թվումն է 1731 թվականին Արցախի Չարեքա մենաստանում Աղվանից կաթողիկոս Ներսես 3-րդի համար գործված խորանավոր, մեր կողմից **«Գանձասար»** անվանակոչված գորգը:

Բնականաբար անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն, որ իսլամական երկրներում նույնպես գոյություն ունեին նմանօրինակ հաստատություններ: Մասնավորապես հայտնի էին Բաղդադում, Կահիրեում, Դամյեթում, Կորդովայում գոյություն ունեցած տարատեսակ գործվածքների, այդ թվում գորգերի արտադրության արքունական ձեռնարկությունները: Եղած կոնկրետ պատմական սկզբնաղբյուրների համաձայն՝ Առաջավոր Ասիայում կազմավորված խոշորագույն աշխարհաքաղաքական կազմավորումներում՝ Սեֆյան Պարսկաստանում և Օսման-յան Թուրքիայում, գործում էին գորգագործական նմանատիպ ձեռնարկություններ:

Գորգագործական և այլ արհեստանոցներ ունեին նաև իսլամ դավանող ցեղերի առաջնորդները: Այս դեպքում գորգագործները հարեմների կանայք էին: Գրավոր տեղեկություններ կան Աղձնիքի, Աղբակի, Դերսիմի քուրդ ցեղապետերի հարեմներում գորգագործությամբ զբաղվելու մասին[20]:

Թվարկված հաստատություններում կային համապատասխան մասնագետ-ներ, այդ թվում գորգանկարիչներ, վերահսկիչ տեխնոլոգներ, որոնք հետևում էին արտադրվող գործվածքի որակին: Ըստ էության գործում էին ճանաչման արժանացած գորգերն ու դրանց վերամշակումները, որով էլ ձևավորվում էին այս կամ այն տիպի գորգերի տասնյակ տարբերակներ: Համենայնդեպս Բիթլիսի Ահմադ խանի հարեմում գործել են նաև Իսֆահանում ստեղծված գորգերի տարբերակներ, որոնցից մեկն էլ խանը նվիրել էր իրեն այցի եկած թուրք փաշային[21]:

Ընդհանուր առմամբ արհեստանոցներում գորգեր գործում էին սեփական կարիքների և նվիրատվությունների համար: Ամեն դեպքում անհայտ է, որ

---

[19]. **Եր. Լալայան,** Գանձակ, Երկեր հինգ հատորով, հատոր 2, Եր.,1988, էջ 249: Արցախի իշխանական տների կանաց ու աղջիկների կողմից ոստայնանկության տարբեր ճյուղերով զբաղվելու մասին ավելի վաղ, մասնավորապես XIII- XIV դդ. վերաբերող տեղեկություններ տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ.Մելիք- Օհանջանյանի, Եր., 1961, էջ 208

[20]**.** Տե՛ս **Էվլիյա Չելեբի**, էջ 203, **Հակոբ Մնձուրի**, Երկեր, Եր., 1986, էջ 494:

[21]. **Էվլիյա Չելեբի**, էջ 203:

գորգագործական մշակույթի ակունքներում ու դրա զարգացման հետագա դարաշրջաններում առաջնային նշանակությունը վերապահված էր արհեստանոցային կազմակերպված արտադրությանը: Ընդ որում արտադրության ծավալները սահմանափակ էին այնքանով, որքանով որ սահմանափակ էր գորգ ունենալու և օգտագործելու հնարավորություն ունեցողների քանակը: Կարծում ենք, որ գորգ ու կարպետ օգտագործողների քանակի կտրուկ ավելացումը տեղի ունեցավ VII-VIII դարերում, երբ արաբական խալիֆաթի կազմավորման ու հետագա ծավալմանը զուգահեռ Առաջավոր Ասիայում իսլամական դավանանքը դարձավ իշխող կրոն, և աղոթագորգերն էլ անհրաժեշտ առարկա էին հավատացյալ մահմեդականների համար: Ընդ որում այս իրադարձությունների հետ պետք է կապել նաև տնայնագործական գորգագործության ծավալումը, որը, անշուշտ, պետք է կատարվեր արհեստանոցային գորգագործության կենտրոններում կամ դրանց մերձակա տարածաշրջաններում:

Ինչպես տեսնում ենք, գորգագործական մշակույթի ծագումնաբանության ուսումնասիրման հարցում գոյություն ունեցող հիմնահարցերը բազմաթիվ են, ու դրանցից յուրաքանչյուրն էլ որոշակի կարևորություն է ներկայացնում հետազոտողի համար:

Չխորանալով մանրամասների մեջ՝ անցնենք հաջորդ հիմնահարցին՝ գորգերի այս կամ այն տիպի ծագման ու տարածման արեալներին, և մանավանդ դրանց էթնիկական պատկանելիության հետ կապված հարցերին: Այս ոլորտում գոյություն ունեն մտացածին ու կամայական բազմաթիվ մոտեցումներ և այդ իսկ պատճառով էլ վիճահարույց են ու տեղիք են տալիս իրարամերժ, հավերժական բանավեճերի: Կարծում ենք՝ այս դեպքում էլ կան որոշակի իրողություններ, որոնց համակողմանի ուսումնասիրման ու համադրման արդյունքում էլ հնարավոր է որոշակի պարզաբանումներ կատարել ինչպես այս կամ այն տիպի ծագման և դրանում այս կամ այն էթնիկական հանրույթի ունեցած նշանակության, այնպես էլ դրանց տարածման արեալների ձևավորման հարցերում:

Այդ իրողությունների թվում են՝

I. **Քոչվորական կենսաձև վարող ցեղերի գործոնը:** Վաղ ու հատկապես զարգացած միջնադարից սկսած՝ պատմական Հայաստանի լեռնային գոտիները քոչվորական ու կիսաքոչվորական կենսաձև վարող ցեղերի համար պատմական Հայաստանի լեռնային տարածաշրջանները դարձել էին սեզոնային մշտական արոտատեղիներ: Հարավային Կովկասում այդպիսիք էին Արցախի, Ուտիքի ու Սյունիքի ալպիական արոտատեղիները: Դրանք իրենց դեգերումների ընթացքում սար բարձրանալու, իսկ այնուհետև էլ այնտեղից ետդարձի ճանապարհին, ըստ ուսումնասիրողների հայտնած կարծիքների և տեղագիր-բանահավաքների հավաքած տեղեկությունների, առաջին հերթին զբաղվում էին ավարառությամբ: Այդ կերպ, ինչպես նաև ապրանքափոխանակության, տեղի գորգագործներին որոշակի պայմաններով բուրդ տրամադրելու և փոխարենը ետդարձի ժամանակ պատրաստի գորգ ստանալու, կամ էլ գնումների միջոցով այդ ցեղերի մոտ կուտակվում էին մեծ քանակությամբ գորգեր ու կարպետներ: Անշուշտ, որոշ ժամանակ անց այդ ցեղերը սկսում են տիրապետել գորգագործությանը, ու այս կամ այն ճանապարհով ձեռք բերված պատմական Հայաստանի գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերը վաչկատունների համար դառնում էին ընդօրինակման առարկա: Ըստ էության՝ հիմնականում հենց այս ճանապարհով էլ հայոց գորգագործական կենտրոններին բնորոշ գորգերի ու նաև կարպետների բազմաթիվ տիպեր լայն տարածում էին ստացել նաև իսլամ դավանող ցեղերի մշակութային համալիրներում:

Ասվածը հատկապես վերաբերում է ավշարներին, թարաքյամաններին, կարափափախներին, շահսևաններին, քրդերին, բախտիարներին, որոնց վերագրվող գորգերի ու կարպետների գերակշիռ մասը Արցախ-սյունիքյան

գորգագործական կենտրոններին բնորոշների վերարտադրություններն ու նմանակումներն են հանդիսանում: Մենք դա բացատրում ենք այն հանգամանքով, որ հենց պատմական Հայաստանի այդ նահանգներում էին գտնվում հիշատակված ցեղերի ամառային յայլաղները, և նրանց քոչի ճանապարհն էլ անցնում էր նշված նահանգների բնակավայրերով:

II. Գորգերի տիպերի ու տեխնոլոգիաների տարածման աղբյուրները: Այս առումով ի շարս այլ գործոնների XIX դարի երկրորդ կեսից կայուն ու կանոնավոր ձև էր դարձել գորգերի արհեստանոցային արտադրությունը: Աշխարհիկ վերնախավի, այդ թվում առևտրականների սեփականություն հանդիսացած ձեռնարկություններում, ի շարս տեղի մասնագետ-նկարիչների ստեղծած ու նախկինից էլ հայտնի և ավանդական դարձած գորգերի, կատարում էին նաև գորգագործական այլ կենտրոններում ստեղծված գորգերի վերարտադրություններ: Անտարակույս, բացի սեփական կարիքների համար գործվող գորգերից, դրանցում գործում էին նաև նվիրատվությունների ու վաճառքի համար նախատեսված գորգերի խմբաքանակներ: Ենթադրում ենք, որ պատվերների կամ բարձր պահանջարկի դեպքում, բացի տվյալ ձեռնարկությունում գտնվող գորգագործուհիներից, աշխատում էին նաև տվյալ իշխանի կամ ցեղապետի իշխանության տակ գտնվող բնակավայրերի տնայնագործ գորգագործները:

III. Տիպերի ու ավանդույթների տարածման հաջորդ կարևոր գործոնն այն է, որ արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում XIX դարի երկրորդ կեսից սկսած ապրանքային գորգագործությունը սկսում է բուռն վերելք ապրել գորգագործական մշակույթի ավանդույթներով հայտնի առաջավորասիական գորգագործական մի շարք կենտրոններում, մասնավորապես հյուսիս արևմտյան Իրանում, Փոքր Ասիայում, հարավային Կովկասում: Դա հիմնականում կապված էր Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում գոյություն ունեցած ձեռնարկություններում արտադրվող գորգերի բարձր ինքնարժեքով, որը պայմանավորված էր հումքի և աշխատուժի թանկությամբ: Նշված հանգամանքները ստիպեցին եվրոպացիներին իրենց գորգագործական ձեռնարկությունները տեղափոխել գորգագործական ավանդույթներով հարուստ տարածաշրջաններ: Անշուշտ, այդ առումով չափազանց նպաստավոր էին ծովային նավահանգիստների հարևանությամբ գտնվող փոքրասիական գորգագործական կենտրոններն ու արդեն 1905-06 թվականներից գործող Բեռլին-Բաղդադ երկաթգծի փոքրասիական կայարանները[22]: Կովկասում էլ այդպիսի գործունեություն էր ծավալել Կովկասյան Տնայնագործական կոմիտեն:

Մենք չենք կարծում, որ այս ճանապարհով կազմավորված ձեռագործ գորգերի արտադրության կենտրոնները համադրելի են ավանդական գորգագործական կենտրոնների հետ, ուստի չեն կարող դեր ունենալ այդ ոլորտի ծագումնաբանության հարցերի պարզաբանումներում: Դրանք պատկանում էին որոշակի առևտրական կամ բարեգործական կազմակերպությունների, արտադրում էին արտերկրում պահանջարկ վայելող գորգատեսակներ ու կատարում էին անհատական պատվերներ: Ընդ որում ձեռագործ գորգերի արտադրության փոքրասիական կենտրոններում գործում էին ինչպես տեղի, այնպես էլ կովկասյան և պարսկական գորգագործական կենտրոններին բնորոշ ավանդական գորգերի վերամշակումներ և վերարտադրություններ: Այդ նույն մոտեցումները իրականացվում էր հարավային Կովկասի գորգագործական ավանդական կենտրոններում, և պատահական չէ, որ խնդրո առարկա տարածաշրջանին վերագրվող XIX-XX դարի առաջին քառորդում գործված գորգերի ճնշող մեծամասնությունը Կովկասյան Տնայնագործական կոմիտեի նկարիչների գծանկարներով ստեղծված կովկասյան ավանդական գորգերի վերարտադրություններն են [23]:

---

[22]. **Donald Quataert**, Textile Workers in the Ottoman Empire, 1650-1922, Binghamton University, State University of New York, http://www.iisg.nl/research/turkey1.doc

Այս ամենի գոյության պայմաններում մենք չենք կարող ընդունելի համարել շրջանառության մեջ գտնվող կովկասյան գորգերի անվանումները, որոնց ճնշող մասը այսպես կոչված «ադրբեջանաբնակ» համարված գյուղերի անվանումներ են: Բնականաբար անընդունելի է նաև գորգագործական մշակույթը «ադրբեջանական» համարելը: Այսպիսով, ակնհայտ է, որ այս ասպարեզում կա նոր մոտեցումների անհրաժեշտություն:

Դասդասման ոլորտում եղած այս իրավիճակը մասամբ կարելի է շտկել տիպերի ծագման ու դրանց արեալային տարածման հետ կապված տեղանունների, պատմական սկզբնաղբյուրներում եղած կոնկրետ փաստերի բացահայտման ու դրանց համադրման ճանապարհով: Համենայնդեպս, որպես մարդկային ստեղծագործության արդյունք, այս կամ այն էթնիկական հանրույթին պատկանող պատմամշակութային ժառանգություն, մենք կարևորում ենք գորգերի էթնիկական ծագման ու պատկանելիության հարցը: Դրանք մարդկության համաշխարհային մշակութային գանձարան կատարած մնայուն ներդրումներ են, ուստի արդար է, որ դրանց ստեղծողներն էլ ներկայացվեն որպես այդ ներդրումների հեղինակներ: Իսկ նման մշակութային ժառանգություն ունենալ-չունենալն էլ հաստատվում են համապատասխան սկզբնաղբյուրների առկայությամբ:

Այսպիսի պահանջներին հարիր տիպաբանման միասնական համակարգի ստեղծումը կարևոր անհրաժեշտություն լինելով հանդերձ՝ պահանջում է պատմամշակութային տվյալների համալիր ու պատմահամեմատական սկզբունք-ների վրա խարսխված ուսումնասիրություն, որով հնարավոր կլինի խուսափել և կամ գոնե նվազագույնի հասցնել այս բնույթի աշխատանքներին բնորոշ թերությունները:

Հարավ-կովկասյան էթնիկական հանրույթների առնչությունը գորգագործական մշակույթին: Տարածաշրջանին վերաբերող մեր ուսումնասիրություններում բազմիցս անդրադարձել ենք այս հարցին ու հնարավորինս ներկայացրել կովկասյան գորգագործական մշակույթի ձևավորման ու հետագա զարգացումների հարցում հայ մի շարք այլ տեղաբնիկ հանրույթների ունեցած գերակա դերը[24]: Հայոց ներկայությունը գորգագործական մշակույթի տեսակետից խնդրո առարկա տարածաշրջանում միանգամայն նկատելի է՝ սկսած վաղ միջնադարից, և դա հաստատվում է ինչպես պատմաազգագրական, այնպես էլ հնագիտական, մասնավորապես վիմագրական տեղեկություններով: Դրա հետ միասին մենք չենք տարակուսում, որ կովկասյան գորգագործական համահավաք մշակույթի կազմավորման հարցում իրենց դերակատարումն են ունեցել նաև տեղաբնիկ այլ ցեղեր ևս: Այս ասպարեզում մենք չափազանց կարևորում ենք Կովկասի, մասնավորապես հարավարևելյան Կովկասի ժողովրդագրական նկարագիրն ու վերջին հազարամյակի ընթացքում դրանում տեղի ունեցած փոփոխությունների բացահայտումը:

Ուստի այստեղ մենք կփորձենք խոսել այլ էթնիկական հանրույթների մասին: Պատմազգագրական ու ժողովրդագրական ուսումնասիրություններից հայտնի է, որ քննության առարկա տարածաշրջանի բնիկ հանրույթներից մեկն էլ թաթերն են, որոնք նույնպես հայտնի են իրենց գորգագործական ավանդույթներով: Ընդ որում Դերբենտ-Շամախի-Բաքու եռանկյունում բնակվող այս հանրույթին ու դրանց բնորոշ գորգագործական ավանդույթներին արտերկրի մասնագիտական

---

[23]. **Пиралов А. С.,** Краткий очерк кустарных промысел Кавказа, издание второе, С.Петербург, 1913, էջ 116-118:

[24]. **Ա. Պողոսյան,** Արցախի գորգագործական ավանդույթները հյուսիս- արևելյան Այսրկովկասի գորգործական կենտրոններում, «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, 14, Եր., 2011, էջ 240-250, **Poghosyan Ashkhunj**, **Rug weaving Culture of Artsakh, Ա. Պողոսյան,** Արցախյան գորգագործական ավանդույթների արեալային տարածման ու Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին, «Բանբեր հայագիտության», 2015, թիվ 2-3, էջ 78-104:

շրջանները գրեթե անտեղյակ են, իսկ ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ եղած տեղեկությունները չափազանց սուղ են: Թաթերին վերաբերող ուսումնասիրություններից հատկապես ուշագրավ են 1928 թվականին արևելագետ, պրոֆեսոր **Բ. Վ. Միլլերի** դաշտային ժողովրդագրական հետազոտությունները: Նա դրանք իրականացրել է այդ թվականներին գոյություն ունեցած Խորհրդային Ադրբեջանի հետազոտման և ուսումնասիրման ընկերությանը կից, 1925 թվականին ստեղծված թաթական հանձնաժողովի հանձնարարությամբ: Միլլերը պարզել էր, որ 1890-ականներին վերաբերող վիճակագրական տվյալների համաձայն՝ նախկին Բաքվի նահանգում ապրում էին շուրջ 125 հազար թաթեր, դա այն դեպքում, երբ 1897թ. մարդահամարի տվյալներով Բաքվի նահանգում բնակչության ընդհանուր թվաքանակը 826716 մարդ էր, այսինքն՝ կազմում էին Բաքվի նահանգի բնակչության ընդհանուր թվի շուրջ 15 տոկոսը[25]: 1922 թվականին կատարված մարդահամարի համաձայն՝ թաթերի թվաքանակը մնացել էր նույնը, և այն Խորհրդային Միության Ակադեմիային կից ԽՍՀՄ ժողովուրդների ցեղային կազմը ուսումնասիրող հանձնաժողովը հրապարակել է 1927 թվականին: Սակայն 1926 թվականի մարդահամարի տվյալների համաձայն՝ թաթերի թվաքանակը կազմել էր միայն 38713 մարդ, որից 28443-ը մուսուլման թաթեր էին, իսկ 10270-ը՝ լեռնային հրեաներ[26]: Այս վերջինս արդյունք էր Ադրբեջանի պետական մարմինների կողմից ազգային փոքրամասնությունների թուրքացմանն ուղղված նպատակասլաց քաղաքականության, ու հենց այդ հանգամանքն էլ պատճառ էր դարձել թաթական հանձնաժողովի՝ վերը նշված որոշման կայացմանը: Պրոֆեսոր Միլլերն իր հետազոտությունների ընթացքում պարզել է նաև, որ թաթերով բնակեցված բնակավայրերում նկատվում էին հայկական գերեզմանոցների մնացորդներ, իսկ թաթերն էլ պատմում էին, որ սկզբնապես իրենց գյուղերում հայերն են ապրել: Թաթերի մի մասի մոտ կար այն համոզմունքը, որ իրենց նախնիները եղել են քրիստոնյա հայերը: Միլլերն այդպիսի տեղեկություններ գրի է առել Ապշերոնյան թերակղզում, Գյոկչայի, Շամախու և Ղուբայի գավառներում, ընդհանրապես թաթաբնակ բոլոր բնակավայրերում[27]: Խնդրո առարկայի առումով մենք կարևորում ենք այն հանգամանքը, որ նշված գավառների թաթաբնակ գյուղերը, մասնավորապես Ղուբայի շրջանի Դարաչիչի, Շուդուգ, Ռուստով, Ղոնաղքենդ, Փիրեբեդիլ, Քիլվար, Ապշերոնյան թերակղզում՝ Սուրահանի, Խիզա, Կալա բնակավայրերը և այլն, ըստ 1950-ական թվականներին ուսումնասիրությունների, գորգագործության հայտնի կենտրոններ էին, ընդ որում Փիրեբեդիլ գյուղի մասին, նշել է նաև պրոֆեսոր Միլլերը /**Նկ. 1, 2**/[28]:

Ղուբա-Դերբենտ տարածաշրջանում ապրող կովկասյան լեզվաընտանիքին պատկանող ցեղերի մեծ մասը՝ լեզգիները, Շահդաղյան խմբին պատկանող բուդուղները, կրըզները, խինալուղները նույնպես զբաղվում էին գորգագործությամբ: Խորհրդային շրջանում դրանց մի մասը ընդգրկված էր Ղոնաղքենդի շրջանում[29], համարվում էր հարավարևելյան Կովկասի գորգագործական մշակույթի առավել զարգացած տարածաշրջաններից մեկը, իսկ

---

[25]. **Народы Кавказа, т. II,** под ред. Б. А. Гарданова, А. Н. Гулиева, С. Т. Еремяна, Л. И. Лаврова, Г. А. Нерсесова, Г. С. Читая, М., 1962, էջ 51, տես նաև՝ https://ru.wikipedia.org/wiki/%D0%91%D0%B0%D0%BA%D0%B8%D0%BD%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F_%D0%B3%D1%83%D0%B1%D0%B5%D1%80%D0%BD%D0%B8%D1%8F

[26]. Б. Миллер,**Таты, их расселение и говоры. Издание Общества Обследования и Изучения Азербайджана. Редакционная коллегия: проф. О. А. Байрашевский, проф. Г. С. Губайдуллин, А. Р. Зифельдт-Симумяги, Г. Г. Султанов. Баку 1929, առաջին գլուխ:** http://www.miacum.am/docs/taty/: Ի **դեպ՝ 1959թ. մարդահամարի տվյալներով թաթերի թվաքանակը կազմել էր 11 հազար մարդ, տես Народы Кавказа, т. II, էջ 181:**

[27]. Նույն տեղում:

[28]. А. С. Пиралов, **стр. 83-85,** С.С. Агаширинова**, Материальная кулзтура лезгин XIX – начало XX в., М., 1978, էջ 81,** Народы Кавказа, **էջ 181, 183,** Б. Миллер, **նշված կայք: Գորգերը տես՝** http://www.carpetcollection.no/, Petter Andreas Haug-ի **հավաքածու:**

[29]. **Керимов Л.**, Азербайджанский ковер, т.2, էջ 196:

«Ղոնաղքենդ» անունով տարբերակված գորգերի տիպն էլ կարևորված էր գորգի համաշխարհային շուկայում[30]:

Մինչդեռ տարածաշրջանի գորգագործական կենտրոններին մանրամասն անդրադարձ կատարած «ադրբեջանական գորգ» հասկացության ստեղծող Լյաթիվ Քերիմովի հրապարակումներում դրանք ուղղակի ներկայացված են իբրև «ադրբեջանական գորգ»: Ըստ այդմ խոսք չկա թաթերի ու մյուս այլ ցեղերին մասին մասին, որոնք իրականում հանդիսանում են «ադրբեջանական» հորջորջված գորգերի ավանդույթների կրողները[31]: Այս առումով հատկանշական է, որ ավելի վաղ հրապարակված ուսումնասիրություններում բավականին մանրամասնորեն ներկայացված են այդ ցեղերին բնորոշ գորգագործական ավանդույթները[32]: Մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ գորգագործությամբ զբաղվում էին նաև հարավարևելյան Կովկասում՝ Շաքիի մերձակա մի շարք բնակավայրերում՝ Նիժ, Վարդաշեն, Սուլթան Նուխի, Միրզաբեյլի, Չոուրլու/ մինչ 1990-ական թթ. բնակված այս տարածաշրջանի բնիկ էթնիկական հանրույթներից մեկը՝ ուդիները[33]: Ուդիների գորգագործությամբ զբաղվելու մասին պատկերացում են տալիս Հայաստանի ազգագրության թանգարանում պահվող գորգերի նմուշները, որոնք ձեռք են բերվել 1985-86 թվականներին, Ջանֆիդա գյուղում հաստատված նախկին վարդաշենցիներից: Ըստ այդմ պարզված է, որ ուդիները նույնպես զբաղվում էին գորգագործական մշակույթով: Այս նույն պատկերն է նաև հայոց գորգագործական ավանդույթների դեպքում: Հարավային Կովկասի գորգագործական մշակույթի հանրահայտ կենտրոններին՝ Արցախին, Սյունիքին, Ուտիքին, Տավուշին ու նաև հարավ-արևելյան Կովկասի հայաբնակ գորգագործական կենտրոններին վերաբերող գորգերի մեծագույն նույնպես ընդունված է համարել «ադրբեջանական»:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, մասնագիտական շրջանակներին տարբեր պատճառներով հայտնի չէ հարավային Կովկասում ավանդաբար գորգագործությամբ զբաղված էթնիկական հանրույթների մեծ մասը, դրանց ստեղծած գորգերն ու դրանց բնորոշ գեղազարդման համակարգերի առանձնահատկությունները: Անտարակույս, այդպիսի իրավիճակը, երբ այս կամ այն հանրույթին վերաբերող պատմամշակութային ժառանգությունը փաստացիորեն յուրացվում կամ փորձ է արվում յուրացվել այս կամ այն հանրույթի կողմից չի կարող ընդունելի համարվել:

Մեր կողմից առաջարկվող սկզբունքներն ըստ էության ընկած են մեր կողմից իրականացված հետազոտությունների ու հրապարակումների հիմքում և ըստ էության այդ ճանապարհով էլ մեզ հաջողվել է բավականին պարզաբանումներ ու բացահայտումներ կատարարել հարավային Կովկասում ստեղծված գորգերի տիպաբանման ասպարեզում: Ենթադրում ենք, որ գորգագետների կողմից վերը ներկայացված սկզբունքներին հետևելու դեպքում հնարավոր կլինի լուրջ շտկումներ իրականացնել կովկասյան գորգերի տիպերի ծագման ու դրանց արեալային տարածման հիմնահարցերում ու բացահայտել գորգագործական ավանդույթներով հայտնի հանրույթների ներդրումները դրանց ձևավորման ու կայացման գործում:

---

[30]. **Նույնը՝** էջ 199-200:,

[31]. Տե՛ս **նույնը,** էջ 134-204:

[32]. **Народы Кавказа**, т. II, էջ 181, 183**,:**

[33]. **Народы Кавказа, т. II,** էջ 195:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Գանձակեցի Կիրակոս**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961։
2. **Էվլիյա Չելեբի**, Ուղեգրություններ, Թուրքական աղբյուրներ, Գ, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Ա.Խ. Սաֆրաստյանի, Եր., 1967։
3. **Լալայան Եր.,** Գանձակ.-Երկեր հինգ հատորով, հատոր 2, Եր.,1988։
4. **Լիսիցյան Ստ.,** Լեռնային Ղարաբաղի հայերը, ՀԱԲ, թիվ 12։
5. **Կաղանկատվացի Մովսես**, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ., առաջաբանը և ծանոթագր.՝ Վարագ Առաքելյանի, Եր., 1969։
6. **Հակոբ Մնձուրի**, Երկեր, Եր., 1986։
7. **Պողոսյան Ա.,** Արցախյան գորգագործական ավանդույթների արեալային տարածման ու Կովկասի հարավարևելյան գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին, «Բանբեր հայագիտության», 2015։
8. **Պողոսյան Ա.**, Գորգի ծիսապաշտամունքային նշանակության առթիվ, ՊԲՀ, թիվ 1, 2000, էջ 177-185։
9. **Պողոսյան Ա**, Հայաստանում գորգագործության ծագման հարցի շուրջ,անդ, թիվ 2, 2001։
10. **Ռաֆֆի**, ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 170-230, Եր., 1987։
11. **Абу-л Каим ибн- Хаукаль,** Книга путей и царств, Перевод и комментарии **Караулова Н. А.**, СМОМПК, вып. 38, Тифлис, 1908 , էջ 14-15
12. **Зедгенидзе Я.,** Город Шуша. Производство ковров и паласов.- СМОМПК вып. XI, Тифлис,1891, էջ 3- 2, 32
13. **Керимов Л.**, Азербайджанский ковер, т.1, Б., 1961
14. **Керимов Л.**, Азербайджанский ковер, Б., 1985
15. Миллер Б.,**Таты, их расселение и говоры. Издание Общества Обследования и Изучения Азербайджана. Редакционная коллегия: проф. Байрашевский О. А., проф. Губайдуллин Г. С., Зифельдт-Симумяги А. Р., Султанов Г. Г., Баку, 1929.**
16. **Народы Кавказа, т. II,** под ред. Б. А. Гарданова, А.Н.Гулиева, С.Т.Еремяна, Л.И. Лаврова, Г.А.Нерсесова, Г.С.Читая, М.,1962
17. **Пиралов А. С.,** Краткий очерк кустарных промысел Кавказа, издание второе, С.Петербург, 1913.
18. **Donald Quataert**, Textile Workers in the Ottoman Empire, 1650-1922, Binghamton University, State University of New York, http://www.iisg.nl/research/turkey1.doc
19. **Wilhelm Bode,** Vorderasiatische knupteppiche aus alterer zeit, Verlag von Hermann Seemann Nachfolger, Leipzig, 1901,
20. **Gantzhorn V.**, Le Tapis Chretien Oriental, Koln,1991
21. **Poghosyan Ashkhunj**, Carpets. - Armenian Folk Arts, Culture and Identity, Ed. by L.Abrahamian and N.Sweezy, Bloomington and Indianapolis, 2001, էջ 156- 162.

ON PRINCIPLES OF SCIENTIFIC RESEARCH ON CARPET WEAVING CULTURE /CAUCASIAN CARPETS/

POGHOSYAN ASHKHUNJ

Candidate of Historical Sciences, Associate Professor,

Lecturer, GSU

e-mail: ashkhunjpoghosyan@gmail.com

Traditionally, for the eastern and especially western Asian ethnic groups, the carpet was considered as an elite item and perceived as an obvious characteristic of cultural development. It is obvious that these textiles, distinguished by high artistic, technical and technological standards are a great contribution to the treasury of worldwide culture. Essentially, these characteristics primarily led to the identification of the origin of carpets and the culture of carpet weaving, its centers, and the related issue of ethnic communities. Since the late 19th century, these matters have become subjects of intense debate. This issue is especially relevant to the carpets created in the South Caucasus. From the 1960s onward, Azerbaijani carpet experts, in this regard, asserted that 95 percent of Caucasian carpets are Azerbaijani. At the same time, facts are ignored, such as the rich and centuries-old traditions of carpet weaving culture among many indigenous ethnicities and communities in the region, including Armenians, Tats, Lezgins, Udins, and Avars. As a result of one of the forms of human creativity, we attach particular significance to the origin and ethnic identity of carpets. They constitute a significant and tangible contribution to the global cultural heritage of humanity, so it would be fair for their creators to be recognized as authors of these contributions.

In terms of identifying the role and significance of a particular community in carpet weaving centers, as well as clarifying issues related to the genealogy of specific types of carpets and their ethnic affiliations, we attach primary importance to the principles mentioned below:

a. Significance and conditions of the initial use of carpets.
b. Original carpet weaving centers and the study of the dynamics of their demographic description.
c. Identification of the reasons for the rise of carpet weaving in the second half of the 19th and the first half of the 20th century, as well as the disclosure of the historical and cultural characteristics of ethnic communities associated with these processes.
d. Establishment of logical and source-based systems for the typography of carpets.

It is believed that the creation of a unified classification system, meeting the above-mentioned requirements, requires the application of a comprehensive and historical-comparative method to study historical and cultural facts. This, in turn, would minimize the shortcomings inherent in such works.

Keywords: *carpet, South Caucasus, source, type, typology, demography, manufacture, handicraftsman.*

О ПРИНЦИПАХ НАУЧНОГО ИССЛЕДОВАНИЯ КУЛЬТУРЫ КОВРОТКАЧЕСТВА /КАВКАЗСКИЕ КОВРЫ/

ПОГОСЯН АШХУНДЖ

Кандидат исторических наук, доцент

Преподователь ГГУ

электронная почта: ashkhunjpoghosyan@gmail.com

Традиционно для восточных и особенно переднеазиатских этносов и этнических элементов ковер считался элитарным предметом и воспринимался как очевидная характеристика культурного развития. Очевидно, что эти ткани, отличающиеся высокими художественными, техническими и технологическими качествами и пользующиеся высоким авторитетом на международном рынке культурных ценностей, являются большим вкладом в сокровищницу мировой культуры. По существу, в первую очередь, эти особенности стали причиной выявления происхождения ковра и культуры ковроткачества, ее центров и связанных с этими вопросами проблема этнических сообществ с конца XIX в. века стали предметом острых дискуссий. Эта проблема особенно ярко выражена в отношении ковров, созданных на Южном Кавказе. С 1960-х годов в этом аспекте выделялись азербайджанские ковроведы, считавшие, что 95 процентов кавказских ковров являются азербайджанскими. При этом игнорируется факты о том, что многие коренные этносы и этнические общины региона, в частности армяне, таты, лезгины, удины аварцы, известны своими богатыми и многовековыми традициями культуры ковроткачества. Как результат одного из видов человеческого творчества, мы придаем особую значимость происхождению и этнической принадлежности ковров. Они являются значительным и ощутимым вкладом в мировую культурную сокровищницу человечества, поэтому было бы справедливо, чтоб их создатели были представлены как авторы этих вкладов.

В плане выявления роли и значения той или иной общины в центрах ковроткачества, выяснения вопросов связанных с генеалогией отдельных типов ковров и их этнической принадлежности, мы придаем первостепенное значение указанным ниже принципам:

- Значение и условия использования первоначального ковра.
- Первоначальные центры ковроткачества и изучение динамики их демографического описания.
- Выявление как причин подъема ковроделия во второй половине 19 и в первой половине XX вв. так и раскрытие историко-культурных особенностей этнических сообществ, связанных в этими процессами.
- Создание логических и обоснованных первоисточиками систем наименовании типов ковров.

Думается, что создание единой системы классификации, отвечающей выше приведенным требованиям, требует применения комплексного и историко-сравнительного метода изучения историко-культурных фактов, что в свою очередь обеспечит минимизирование недостатков, присущие подобного рода трудам.

Ключевые слова: *ковер, Южный Кавказ, источник, тип, типология, демография, мануфактура, кустарь.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 14.04.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 29.04.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: